ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ.ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեման – Ստեղծագործականության զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում

Մասնակից՝ Ռիմա Հովագիմյան

Դպրոց՝ Արագածի Մ. Մեխակյանի անվան միջն. դպրոց

Վերապատրաստող՝ Կարինե Ավետիսյան

Վաղարշապատ 2022թ.

ՆԱԽԱԲԱՆ

Դաստիարակությունը խղճի գործն է կրթությունը գիտության գործն է։

Հետագայում արդեն ձևավորված մարդու մեջ,

ճանաչողության այդ երկու տեսակները լրացնում են միմյանց։

Վ.Հյուգո

Կրթության և դաստիարակության գործընթացում ստեղծագործ անհատակության զարգացումը ժամանակակից հասարակության կարևոր խնդիրներից մեկն է։ Որպես կրթության բարձրագույն նպատակ է սահմանվում ինքնազարգացող և ինքնորոշող անհատականության ձևավորումը,որն ունակ է բաց ստեղծագործական փոխազդեցության միջավայրի և հասարակության հետ։ Մանկավարժական գիտությունը կենտրոնական խնդիրներից է համարում կրթության ազդեցությունը անհատի ստեղծագործական զարգացման վրա։ Նույնիսկ Կ.Դ.Ուշինսկին,Ս.Տ.Շատսկին,Պ.Պ.Բլոնսկին և այլ ուսուցիչներ նշել են կրթական գործընթացում կրթության և դաստիարակության միասնության կարևորությունները,հնարավորությունները ու կարիքները։ Ներկայումս մանկավարժական գիտության առաջնահերթ խնդրիներից է անհատի և հասարակության մեջ որակապես նոր հարաբերությունների ուսումնասիրությունը, երեխաների կրթության,ուսուցման և ստեղծագործական զարգացման առավել օպտիմալ ուղիների որոնումը։ Շարունակական կրթության համակարգում առանձնահատուկ տեղ է գրավում լրացուցիչ կրթությունը, որը հանդես է գալիս որպես անհատի զարգացումը դեպի գիտելիքների և ստեղծագործական գործունեություն ծավալելու միջոց։ Անհատի ստեղծագործական զարգացման խնդիրը չի կարող իրականացվել միայն դպրոցական համակարգի ջանքերով, մեր երկրում մեծ փորձ ունեցող լրացուցիչ / արտադպրոցական/ կրթությունը կոչվում է մասնակցելու դրա իրականացմանը։ Անժխտելի փաստ է, որ առաքինի, ազնիվ ու հայրենասեր երիտասարդները կյանք են մտնում այն ընտանիքներից , ուր իշխում են կարգուկանոնը, հարգանքը շրջապատի նկատմամբ , պատվասիրությունը, բարոյականությունն ու հայրենասիրությունը։ Տունն է ստեղծում մարդուն։ Հայրն ու մայրն առաջին ուսուցիչներն ու դաստիարակներն են և հենց ընտանիքում էլ դրվում են բարոյական ու ֆիզիկական կրթության առաջին հիմունքները և ցանվում բնավորության սերմերը։ Դաստիարակությունը հեշտ գործ չէ ու չի սահմանափակվում ամիսներով, տարիներով և պահանջվում է համբերատարության և տոկունության անհուն պաշար։Ներկա ժամանակներում դպրոցականների ինքնազարգացման և ստեղծագործական կարողությունների համակարգման հարցերը խիստ արդիական են։ Կրթության որակի բարձրացումը և այն մրցակցային հարթակի վրա պահելը բոլոր ժամանակների գերխնդիրներից է եղել և կա։ Այսօր ուսուցչի և կրթությունը իրականացնող այլ մասնագետների առջև ծառացել է նոր մարտահրավեր՝ հետաքրքիր և գրավիչ դարձնել կրթության այս կամ այն ոլորտը աշակերտի համար։ Դա այնքան էլ հեշտ չէ , քանի որ մենք գործ ունենք

տեղեկատվական ամենալայն ցանցերից օգտվող սերնդի հետ, և հետևաբար նրանց տեղեկությամբ զարմացնելն ու փաստեր բերելը շատ քիչ է։ Ուստի կարծում եմ, որ կրթության բոլոր բնագավառներում առարկայի դասավանդման ընթացքում հաջողված աշխատանքի գրավականը ստեղծագործական մոտեցման զարգացումն է և՛ ուսուցչի և՛ աշակերտի մոտ։ Լինել ստեղծագործ և նորարար բավականին բարդ է, բայց արդի տեխնիկական, կապային և մյուս բոլոր աջակցող գործոնները ստեղծագործական մոտեցման համար բավական կլինի միայն թույլ տալ երևակայությանը ճախրել՝ նախ ուսուցչի, ապա իր օրինակով ոգեշնչված աշակերտի։



Հետազոտական համատեքստ

Կառավարչական գործունեության մեջ ստեղծագործությունը ամենակարևոր ներուժն է և հարստությունը, որի առկայության շնորհիվ ստեղծվում են նոր գաղափարներ,կազմակերպվում և խթանվում է նորանոր արդյունքի ստեղծումը, մշակվում են գործունեության ճկուն ռազմավարություններ: Ստեղծարարության զարգացումը ժամանակի հրամայականն է և դիտարկվում է որպես զարգացման մեխանիզմ, հասարակության առաջընթացի շարժիչ ուժ:

1. Ստեղծարարությունը չափազանց արժեքավոր է մարդկանց և հասարակության համար:

2. Անձնային զարգացման մակարդակում ստեղծարարության զարգացումն ապահովում է բավարարվածություն, ինքնանույնականացման աճ, ինչպես նաև ընդլայնում է մասնագիտական զարգացման հնարավորությունները:

3. Ստեղծարարության էությունը դիտարկվում է Լ. Գիլֆորդի,Պ. Թորենսի,Ֆ.Վիլյամսի և այլոց հայեցակարգերում:

Ըստ ամերիկյան հետազոտող մանկավարժ Պ.Թորենսի <<ստեղծարարությունը>> ոչ թե հատուկ,այլ ընդհանուր կարողություն է , որը հիմնվում է ընդհանուր ինտելեկտի, անձնային որակների և արդյունավետ մտածողության կարողության վրա: Ջ.Գիլֆորտը առանձնացնում է ստեղծարար մտածողության չորս չափանիշներ՝

1. Սահունություն
2. Ճկունություն
3. Յուրօրինականություն
4. Մշակվածություն

Ըստ Ֆ.Վիլյամսի ստեղծարարությունը մտածողության և անձնային որակների որոշակի ամբողջություն է, որը նպաստում է ստեղծագործականության դրսևորմանը: Ամփոփելով այս ամենը կարող ենք ասել,որ ստեղծագործական մտածողությունը կամ կրեատիվությունը պարտադիր է յուրաքանչյուր այն մադու համար, ով ստեղծում է իր սեփական արտադրանքը: Մենք կկարողանանք արդյունավետ մտածել միայն այն ժամանակ, երբ մեր երևակայությունը սկսի անդադար ճախրել՝ ընթացքում հանգելով նոր գաղափարների ստեղծմանը:

Գործնական համատեքստ

Ուսուցման և ուսումնառության բարելավումը հնարավորություն է կրթության մեջ նոր գործնական կարողությունների ու հմտությունների ձևավորման : Ուսուցման ընթացքում գործնական կարողությունների և հմտությունների որակներ սովորողները ձեռք են բերում տեսական գիտելիքների շնորհիվ, որոնք բացահայտվում են փորձարարական պրակտիկայում և ուղղված են տեսական գիտելիքների խորացմանն ու աշխատանքային որակի մեթոդների յուրացմանը: Ստեղծագործական ունակություններով օժտված սովորողը մասնակից լինելով սեփական ուսումնառության պլանավորմանը , իրականացման և վերլուծության փորձերին՝ նորովի պատկերացումներով է սովորում սովորել: Սովորողների գործնական կարողությունները և հմտությունները ձևավորվում են գործնական աշխատանքների առաջադրման շնորհիվ, որոնք սովորողին մղում են ստեղծագործական դաշտ: Գործնական աշխատանքները կիրառվում են բոլոր ուսումնական առարկաների շրջանակներում: Այն ընթացիկ գնահատման արդյունավետ տեսակներից է՝ հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանված ութ առանցքային կարողունակությունների զարգացումն ապահովելու համար: Այն կառուցվում է առարկայի չափելի վերջնարդյունքների վրա, ինչն էլ պայմանավորում է առաջադրանքի և աշխատանքի տեսակի ընտրությունը: Գործնական պարապմունքների ժամանակ սովորողները ձեռք են բերում ուսումնագիտական գրականության հետ աշխատելու , աղյուսակներ կազմելու և վիճակագրական տվյալներ վերլուծելու հմտություններ, իսկ լաբորատոր աշխատանքների արդյունքում սովորողների մոտ ձևավորվում են հետազոտությունների իրականացման համար անհրաժեշտ հմտություններ:

Ըստ սովորողի գործունեության ձևի գործնական աշխատանքները բաժանվում են երեք խմբի՝

- Վերարտադրողական / ինչ է սովորել և կարողանում անել սովորողը/
- Մասամբ որոնողական / երբ սովորողը ոչ միայն սովորել է , կարողանում է անել , այլև պետք է կատարի լրացումներ և լուծի իրեն առաջադրված խնդիրները/
- Ստեղծագործական / երբ սովորողը ինքը պետք է ինքնուրույն կամ խմբի անդամների հետ լուծում գտնի առաջադրված խնդիրների համար՝ ցուցադրելով կարողունակությունների զարգացման որոշակի մակարդակ:

  Հանրակրթության զարգացման արդի փուլում , երբ անձի անհատականության կայացմանն ու զարգացմանը բազմակողմանիորեն աջակցելը դառնում է կարևոր խնդիր, նշանակալի ուշադրություն է դարձվում սովորողների ներաշխարհի, նրանց հետաքրքրությունների ու պահանջմունքների զարգացմանը: Այս դեպքում առաջին պլան է մղվում ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ նոր մոտեցումների ապահովման խնդիրը:Այդ գործընթացում պետք է փոխվեն շեշտադրումները, ուսումնական առարկաների միջոցով գիտելիքների պարզ հաղորդումից անհրաժեշտ է հասնել դպրոցականի ստեղծագործական

ներուժի զարգացմանը և իրացմանը: Այստեղից էլ ձևավորվում է ուսումնառության նոր ընկալումը՝ ոչ միայն բազմակողմանի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների տիրապետում, այլև ընկալվածի նկատմամբ ինքնուրույն ստեղծագործական վերաբերմունքի դրսևորում: Ըստ վերը նշվածի ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպելիս հաշվի են առնվում գործունեության այնպիսի տեսակներ, որոնք խթանում են անձի աշխարհհայեցողությունը և ապահովում նրա ստեղծագործական ինքնուրույնությունը: Սա էլ իր հերթին այնպիսի գործընթացների կազմակերպման պահանջներ է ներկայացնում, որոնք պետք է օժանդակեն սովորողների ստեղծագործականության զարգացմանն ու ակտիվությանը: Այս խնդրի լուծման համար անհարժեշտ է սահմանել հետևյալ հարաբերակցությունը.

1. Ստեղծագործություն
2. Ստեղծագործական գործունեություն
3. Ստեղծագործական ունակություն
4. Ստեղծագործական մտածողություն

Ստեղծագործություն հակացությունը բնութագրվում է հետևյալ կերպ. ստեղծագործությունը մարդկային գործունեության արդյունք է, որում ստեղծվում են որակապես նոր նյութական և հոգևոր արժեքներ:

Ըստ Յա. Սկալկովայի ստեղծագործությունը անձի ինտեգրյալ որակ է, այն համարժեք չէ մտավոր ընդունակություններին: Ավելին նա հաստատում է որ մեծ մտավոր ընդունակությունները ոչ միշտ են համապատասխանում ստեղծագործական բարձր մակարդակին: Ստեղծագործելու համար նրա կարծիքով, անհրաժեշտ են բարձր աշխարհայեցողություն,նոր գիտելիքների և դրանց հիման վրա արդեն գոյություն ունեցող իրականության կատարելագործման ուղղությամբ կերպափոխող գործունեության ներքին պահանջ: Ըստ գիտնականների ուսուցման գործընթացում ստեղծագործական գործունեությունը սահմանվում է որպես մարդու գիտակցական գործունեության տեսակ: Ըստ Լ.Ս. Վիգոտսկու <<ստեղծագործությունը գոյություն ունի ոչ միայն այնտեղ,որտեղ մարդը երևակայում է,այլ նաև համադրում է,փոփոխում ու ինչ-որ բան ստեղծում: Ստեղծագործական գործունեության համար կայուն հիմքեր ստեղծելու համար անհրաժեշտ է զարգացնել երեխայի երևակայությունը:Որքան շատ է երեխան տեսնում,լսում,հուզվում,որքան շատ է ընկալում ու բացահայտում այնքան հեշտ է վերարտադրում իր զգացածը, այնքան բարձր է նրա ստեղծագործական ակտիվությունը:Երևակայությունը կարևոր գործառույթ է ձեռք բերում մարդու վարքագծի ու զարգացման մեջ, որովհետև նա կարող է երևակայել այն , ինչ չի տեսել , կարող է ուրիշի պատմածով ու նկարագրածով պատկերացնել այն , ինչը նրա անձնական փորձառության մեջ չի եղել,նույնիսկ կարող է այդ փորձից շատ հեռանալ, որտեղից էլ առաջանում է երևակայության ու ստեղծագործական ակտիվության երկակի ու փոխադարձ կախվածությունը:Ուսուցչի աշխատանքի արդյուանվետությունն

առաջին հերթին որոշվում է նրանով թե որքանով է կրթադաստիարակչական գործընթացը նպաստում սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացմաը, ինչպես է նրանց մղում որոնողական-ճանաչողական-ստեղծագործական գործունեության: Այսպիսի գործընթացը սովորողներին գործնական ճանապարհով ոչ միայն նախապատրաստում է ակտիվ ուսումնական և աշխատանքային գործունեության, այլև նրանց մեջ առաջացնում է սովորելու դրական դրդապատճառներ, ստեղծում ուսման մեջ հաղթանակներ ձեռք բերելուն նպաստող հուսալի իրադրություն և սեփական ուժերի նկատմամբ վստահություն: Ուսումնական գործունեության ուսումնասիրությունների ընթացքում պարզվեց, որ անգամ այն սովորողները որոնց պայմանականորեն տրված է «անհուսալիի» պիտակ, ակտիվանում են, ուսումնական առաջընթաց են ապրում, երբ դասի գործընթացում ստեղծվում են նրանց ստեղծագործական հնարավորությունների դրսևորման հնարավորությունը:Աշակերտների բազմաբնույթ մտածողության, երևակայության, ստեղծագործական ունակությունների զարգացմանը կնպաստի այն գործունեությունը, որի ժամանակ ուսուցչին կհաջողվի կազմակերպել նրանց անհատականության, ինքնատիպության դրսևորմանը նպաստող ուսումնական գործունեություն: Ոչ միայն ուսուցիչը պետք է պատմի ուշագրավ, հետաքրքրաշարժ, սովորողներին զարմացնող և արարման մղող պատմություններ:

Մոտիվացիան անհրաժեշտ է

Հետազոտության ընթացք

Լինել ստեղծագործ և նորարար բավականին բարդ է, սակայն հետաքրքիր և գրավիչ: Հաշվի առնելով արդի տեխնիկական, կապային և մյուս բոլոր աջակցող գործոնները ստեղծագործական մոտեցման զարգացման համար բավական կլինի միայն թույլ տալ երևակայությանը ճախրել: Սա առաջին հերթին պետք է կատարի ուսուցիչը, ապա իր իսկ օրինակով ոգեշնչի և ուղղորդի նաև աշակերտներին՝ լինել ստեղծագործ իրենց ուսման ոլորտում:

Այս թեմայի ուսումնասիրումը բաժանել եմ երկու մասի, դրանք են՝ պատմության ուսուցման ընթացքում սովորողների ստեղծագործական մոտեցման կարևորությունը և ՏՀՏ գործիքները որպես ստեղծագործական մոտեցման հնարավորություն: Ուսումնասիրությունն ավարտել եմ իմ կողմից բերված եզրակացությամբ և օգտագործված գրականության ցանկով:

Պատմության ուսուցման ընթացքում սովորողների ստեղծագործական մոտեցման կարևորությունը

«Ուսուցումը ձայնանշանային փոխազդեցություն է գիտելիք ու փորձ ունեցողների և դրանք ձեռք բերողների միջև»:

Ուսուցման մեջ միշտ էլ կարևորվել է սովորողների ստեղծագործական ներուժի զարգացումն ու ստեղծագործ անհատների դաստիարակումը: Արդի մանկավարժական պրակտիկայում առավել կարևորվում է սերնդի ստեղծագործական ներուժի զարգացումը: Այն բխում է ժամանակակից հասարակության պահանջներից և իրականացվում է կրթական համակարգի բոլոր աստիճաններում՝ նրա բոլոր մասնակիցների համար: Սովորողների գործունեության մեջ այն դրսևորվում է տեղեկության որոնման, դրա՝ ըստ անհրաժեշտության տարբերակման ու կիրառման, կյանքում առանց դժվարությունների կողմնորոշվելու կարողության, ստեղծագործական մտածողության մեջ և այլն: Սա նշանակում է , որ բոլոր կրթական պլաններում ու ծրագրերում պետք է նախատեսվեն գործունեության այնպիսի ձևեր, որոնք ոչ միայն կխթանեն սովորողների տրամաբանական, քննադատական, այլև ստեղծագործական մտածողությունը: Ուսուցիչների համար այն դրսևորվում է մասնագիտական գործունեության առավել արդյունավետ ոճի ընտրությամբ, մի շարք

նորարարական տեղնոլոգիաների, ծրագրերի մշակմամբ, կիրառմամբ և այլն։
Ինչպես նաև սովորողներինմղել հնարավորինս շատ և տարաբնույթ ստեղծագործական մտահաղացումների, չկանխել նրանց անսովոր գաղափարները, չվախենալ սխալներից։
Ստեղծագործելու համար միայն ինտելեկտը բավարար չէ։ Ստեղծագործող անձը պետք է գործի անորոշության պայմաններում իմաստավորի և վերաիմաստավորի իր գործողությունները, ոչ կաղապարային լուծումներ որոնք հաճախ կռահմամբ և կանխագուշակմամբ, հաղթահարի դժվարությունները՝ նույնիսկ հիասթափության և անելանության զգացմունք է ի հայտ գալիս։
Ներկա ժամանակներում դպրոցականների ինքնազարգացման և ստեղծագործական կարողությունների համակարգման հարցերը խիստ արդիական նշանակություն ունեն։ Անհրաժեշտ է աշակերտներին պարբերաբար այնպիսի հանձնարարություններ տալ որոնցով կզարգանա նրանց ստեղծագործ միտքը կդրդի նրանց նոր մտածողության, ինքնուրույն որոնողական գործունեության, կզարգացնի նրանց միտքը։
Ինչը նաև կբարձրացնի նրանց ինքնակրթության և ինքնազարգացման ցուցանիշը։
Պատմության դասի ընթացքում երեխաների ստեղծագործական մտածողությանը խթանող մի շարք միջոցներ կարելի է կիրառել։ Դասի ավարտին երբ երեխաները ծանոթ են ամբողջական նյութին կարելի է հանձնարարել դասի վերլուծություն , թույլ տալ սեփական կարծիքը արտահայտել։ Մեկ այլ տարբերակ է երեխաներին հանձնարարել դասը ներկայացնել պրեզենտացիայի միջոցով օգտագործելով գործիքակազմ։ Կիրառել դասի ընթացքում դիտակտիկ նյութերի օգտագործում, որը կխթանի նրանց ստեղծագործ միտքը հնարավորություն տալով օգտվել և՝ համացանցից, և՝ անհրաժեշտ գրականությունից։ Խմբային աշխատանքի միջոցով ներկայացնել դասը, դրանով բոլոր աշակերտներին ինտեգրել դասի մեջ։
Թեմայի շուրջ կազմակերպել առողջ բանավեճ, հատկապես եթե օրվա դասի մեջ կան պայմանագրեր վերլուծելու կետերը և դրանց արդիական լինելն այսօրվա իրականության հետ։

Քննարկել թեմայի արդիականացումը,պատճառահետևանքային կապերը, համեմատել այս ժամանակաշրջանի իրադարձությունների հետ։
Հնարավորություն տալ աշակերտներին կազմելու հարցաշար օրվա դասի կամ նախորդ թեմայի վերաբերյալ։ Ինչպես նաև թեմայի շուրջ ֆիլմի դիտում և քննարկում ինչը հնարավորություն կտա ստուգել երեխաների տրամաբանությունը

և նրանց դատողությունը: Երեխաների ստեղծագործական մտածողությունը էլ ավելի զարգացնելու համար հանձնարարել թեման ներկայացնել ըստ ծաղրանկարի կամ ըստ պատկերացմանք: Եթե օրինակ դասի թեման է Ավարայրի ճակատամարտը կարելի է հանձնարարել երեխաներին գծել սխեմա, ներկայացնել հայկական և պարսկական զորքերի տեղաշարժերը և ռազմական դիրքերը ճակատամարտի ընթացքում : Ինչու չէ կարելի է դասը ներկայացնել նաև բեմականացման կամ խաղի միջոցով: Երեխաներին թույլ տալ արտահայտել պատկերային մտածողությամբ նրա երևակայությունը թեմայի շուրջ: Հատկապես կարևոր է դասի ավարտին անպայման երխաներին հարցնել դասի կարևորությունը, թույլ տալ արտահայտել սեփական տեսակետը և նրանց ապագայի տեսլականը և անպայման չկոտրել երեխայի մոտստեղծագործական ունակությունները: Պատմության դասի ընթացքում շատ կարևոր է քարտեզի առկայությունը և դրանից ճիշտ օգտվելու ձևը:

Հատկապես կարևորվում է դասի ընթացքում առաջադրանքների միջոցով պարզել երեխաների կոմպետենցիաները: Դասի ընթացքում կարևորել դասի նպատակը, դրանից բխող խնդիրները և անպայման կազմել եզրահանգում: Երեխաների ստեղծագործական մտածողությունը օգտագործելով կազմել հարցազրույց-առաջադրանքներ թեմայի շուրջ: Անգամ իրենք կարեղ են պատրաստել փոքրիկ ֆիլմեր ուսուցողական և արդի:

Պատմության դասի ընթացքում հատկապես կարևոր ենխմբային աշխատանքները: Կարելի է դասարանը բաժանել խմբերի և հանձնարարել թեմայի շուրջ պաստառների պատրաստում, մինչ աշակերտները աշխատում են ուսուցիչը հսկում է խմբերին ըստ հարկի միջամտելով: Երբ աշակերտները ավարտում են իրենց աշխատանքները, քննարկում են համատեղ աշխատանքի արդյունավետությունը, թվարկելով միմյանց օգնելու համար իրենց կատարած որոշակի գործողությունները, ծրագրում են թե հաջորդ անգամ համատեղ աշխատանքում ինչ վարքագիծեն դրսևորելու և միմյանց շնորհակալություն հայտնում համատեղ աշխատանքի և օգնության համար: Աշակերտներին կարելի է ներգրավել գնահատման իրական գործընթացում,այդպիսով շատերին մասնակից դարձնելով այդ աշխատանքին:

Թույլ տալով սովորողներին ցուցաբերել ստեղծագործական մոտեցում, մենք կունենանք ապագա նշանավոր մտածողներ և գիտնականներ:

ՏՀՏ գործիքները որպես ստեղծագործական մոտեցման հնարավորություն

ՏՀՏ գործիքներն ու տեխնոլոգիաներն ինչ խոսք դարձել են 21-րդ դարի աշխատանքային հարթակը, այդ թվում նաև կրթական համակարգի համար: Այսօր հրամայական է դարձել ՏՀՏ գործիքների կիրառումը կրթության մեջ ոչ միայն այն պատճառով, որ տեխնոլոգիաների տիրապետումը կարևոր է, այլև այն ավելի հետաքրքիր է այսօրվա աշակերտի համար, ավելի լայն հնարավորություններ է տալիս զարգացնելու պատկերավոր և տարածական մտածողությունը, զարկ տալ երևակայությանը, շրջագայել ժամանակի մեջ և ինչու չէ նաև ցուցաբերել այն ստեղծագործական մոտեցումը, որն անխոս մեծ մոտիվացիա է աշակերտի համար նորովի նայելու պատմություն առարկային, նորովի բացահայտելու զարգացող իրադարձությունների ընթացքը և հասկանալու դրանց արդիական արժեքները:

Ընդհանուր ՏՀՏ գործիքներ հասանելի են գրեթե բոլորին (էլ. փոստը, փոստային ցուցակները, նորությունների խմբերը, չաթը):

Իրական ժամանակի հաղորդակցության համար մշակվել են հատուկ ծրագրեր, որոնք կապ հաստատելուց հետո հնարավորություն են տալիս փոխանցել ստեղնաշարից մուտքագրված տեքստը, ինչպես նաև ձայնը, նկարները և ցանկացած ֆայլեր: Այս ծրագրերը թույլ են տալիս հեռավոր օգտվողներին աշխատել համատեղ ծրագրի հետ, որն աշխատում է տեղական համակարգչում:

Տվյալների սեղմման նոր ալգորիթմների գալուստով համակարգչային ցանցով փոխանցման համար մատչելի ձայնի որակը զգալիորեն բարելավվել է և սկսել է մոտենալ ձայնային որակին սովորական հեռախոսային ցանցերում: Արդյունքում,

ՏՀՏ համեմատաբար նոր գործիքը՝ ինտերնետային հեռախոսակապը, սկսեց շատ ակտիվ զարգանալ: Հատուկ սարքավորումների և ծրագրակազմի միջոցով աուդիո և վիդեո կոնֆերանսները կարող են անցկացվել ինտերնետի միջոցով: Հեռահաղորդակցման ցանցերում տեղեկատվության արդյունավետ որոնում ապահովելու համար կան ավտոմատացված որոնման գործիքներ,որոնց նպատակը գլոբալ համակարգչային ցանցի տեղեկատվական ռեսուրսների վերաբերյալ տվյալների հավաքագրումն ու օգտվողներին արագ որոնման ծառայություն տրամադրելն է:Որոնիչների օգնությամբ դուք կարող եք որոնել փաստաթղթեր համաշխարհային ցանցում, մուլտիմեդիա ֆայլեր և ծրագրաշարեր,հասցեների վերաբերյալ տեղեկություններ կազմակերպությունների և մարդկանց մասին

Կրթական ՏՀՏ գործիքները կարող են դասակարգվել ըստ մի շարք պարամետրերի.

1. Ըստ լուծված մանկավարժական առաջադրանքների.

նշանակում է հիմնական դասընթացների տրամադրում (էլեկտրոնային դասագրքեր, ուսումնական համակարգեր, գիտելիքների կառավարման համակարգեր),գործնական ուսուցման գործիքներ (խնդիրների գրքեր, սեմինարներ, վիրտուալ դիզայներներ, սիմուլյացիոն ծրագրեր, սիմուլյատորներ), օժանդակ միջոցներ (հանրագիտարաններ, բառարաններ, գրքեր կարդալ, համակարգչային խաղեր զարգացնել, մուլտիմեդիա դասընթացներ)

2. Ըստ ուսումնական գործընթացի կազմակերպման գործառույթների.

Տեղեկատվություն և ուսուցում(էլեկտրոնային գրադարաններ, էլեկտրոնային գրքեր, էլեկտրոնային պարբերականներ, բառարաններ, տեղեկատու գրքեր, ուսումնական համակարգչային ծրագրեր, տեղեկատվական համակարգեր), ինտերակտիվ (էլ.փոստ,էլեկտրոնայինհեռակոնֆերանս),որոնիչներ (կատալոգներ, որոնիչներ):

3. Ըստ տեղեկատվության տեսակի.

էլեկտրոնային և տեղեկատվական ռեսուրսներ տեքստային տեղեկատվությամբ (դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, խնդրագրքեր, թեստեր, բառարաններ,տեղեկատու գրքեր,հանրագիտարաններ,պարբերականներ,թվային տվյալներ,ծրագրեր և ուսումնական նյութեր):

21-րդ դարում կրթությանը մեծապես աջակցում է ՏՀՏ գործիքները

Այսօր ՏՀՏ գործիքները հնարավորություն են տալիս ոչ միայն առանց ժամային գրաֆիկի, հեռավորության և այլ խոչընդոտների կապ հաստատել ցանկացած մասնագետի հետ, այլ նաև հնարավորություն են տալիս օգտվելու ցանկացած հեռավորության վրա գտնվող և թվայնացված գիտական աղբյուրներից, մշակութային օբյեկտներից և անգամ այցելել որևէ երկիր առանց ֆիզիկական տեղափոխման: Բնական է, որ այս հնարավորությունները պետք է փոխեին կրթական պահանջները, այսօրվա աշակերտի պատկերացումներն ու նախասիրությունները: Առանց այս գործիքակազմի տիրապետման հնարավոր չէ հետաքրքրել աշակերտին, ինչը համարում եմ առանցքային մանկավարժության գործում: Յուրաքանչյուր ուսուցիչ մինչև իր առարկայի առանձնահատկությունների և բուն նյութի մատուցմանն անցնելն առաջին հերթին պետք է գրավի աշակերտի ուշադրությունը: Շատ հաճախ դա հնարավոր է ստեղծագործական մոտեցումների շնորհիվ, եթե նախկինում դա մեզնից բավական ժամանակ էր խլում, ապա այսօր ՏՀՏ հարթակն այդ խնդիրը լուծում է առանց հավելյալ ժամեր ծախսելու: Հսկայական քանակությամբ կրթական կամ կրթությանը հարմարեցված գործիքներից ուսուցիչը կարող է առանձնացնել որոշները, որ առավել հարմար կամ հասկանալի են իր համար և դրանց միջոցով բացատրել դասերը կամ կազմակերպել ուսումնառության այլ պահանջներ:

Ուսուցչի կողմից այս գործիքների կիրառումը կբերի նաև աշակերտների հետաքրքրության բարձրացմանը, ինչպես նաև հնարավորություն կտա նրանց զարգացնելու իրենց սեփական մոտեցումների զարգացումը, թույլ կտա համացանցն ու տարատեսակ ծրագրերն ընկալել ոչ միայն որպես ժամանցի կամ շփման հարթակներ,

այլ նաև կրթական գործիքներ։

Ստորև կներկայացվեն այն կրթական գործիքները, որոնց կիրառումը փորձված է դասավանդման ընթացքում և որոնք անսպառ ստեղծագործական հնարավորություններ են ոչ միայն ուսուցչի, այլ աշակերտների համար։

1. socrative.com հավելվածի միջոցով կարելի կազմել բազմաթիվ հարցումներ, ստեղծել դասարաններ, տարբեր թեմաների քննարկման համար նախատեսված խմբեր։ Այս գործիքը թույլ է տալիս արագ ստուգել աշակերտների գիտելիքները, ուսուցչին հնարավորություն է տալիս ավտոմատացված կատարել գնահատում և կազմել տարբեր մակարդակի հարցումներ։ Սա նաև լավ գործիք է աշակերտների կիրառման համար, նրանք կարող են իրենց կողմից թեմայի իմացության մասին վկայող աշախատանքներ կատարել։ Հավելվածը վճարովի տարբերակով տրամադրում է շատ ավելի լայն հնարավորություններ դպրոցականի ստեղծագործական գործունեության և գիտելիքների զարգացման հարցում։

https://b.socrative.com/teacher/#quizzes

2. Շատ լավ ստեղծագործական գործիք ՏՀՏ հարթակում կարող է ծառայել playposit-ը, որն ակտիվացնելու դեպքում շատ պարզ եղանակով աշակերտները կկարողանան ստեղծել հարստացված տեսահոլովակներ, իրենց սեփական տեսահոլովակները, իրենց մոտեցումը ձևակերպել որևէ թեմայի նկատմամբ։ Այս գործիքը նաև հնարավորություն է տալիս ուսուցիչներին դասը մատուցել հարստացված տեսաշարի, նրանցում հղած հարցերի միջոցով։ Կարծում ենք պատմության դասաժամերի համար այս գործիքը բավականին կիրառելի է։ Կարելի է անգամ սեփական հեռախոսով որևէ վայր նկարահանել կամ որևէ պատմական իրադարձության վերաբերող տեսահոլովակ ստեղծել, ապա այս գործիքով հարստացնել, առանձին հատվածներում ավելացնելով գրություններ, հարցումներ և այլ տեղեկատվություն։

Այս գործիքին խիստ առընթեր լրացնում է Screencast-O-Matic գործիքը, որով աշակերտը կարող է իր ցանկացած ստեղծած կամ արդեն պատրաստի տեսահոլովակի ձայնը անջատել՝ տեղադրելով իր խոսքը, կամ առհասարակ տվյալ պահին ինքն իրեն տեսաձայնագրել։

Այս գործիքները լայն հնարավորություն են տալիս աշակերտներին և ուսուցիչներին փոխադարձ ստեղծագործական մոտեցումներ ցուցաբերել և զարգացնել

պատմություն առարկայի նկատմամբ հետաքրքրությունը։

https://www.playpos.it/login

https://screencast-o-matic.com/login

3.Տեսաշարերի, նկարների կցմամբ հարցումների կազմման գործիք է նաև sway.office.com-ը, որը կրկին կարելի է կիրառել աշակերտների հետ հեռավար և նաև հիբրիդ դասերի վարման ժամանակ։ Կիրառելի է նաև աշակերտների կողմից, մատչելի է գրանցումն ու կիրառումը։ Հնարավորություն է տալիս ստեղծագործական մոտեցումները զարգացնել դասապրոցեսի և թեմաների նկատմամբ։

https://sway.office.com/Czvg2binx18G4gN1

4. Հետաքրքիր գործիք կարող է հանդիսանալ դասապրոցեսին աշակերտների համար նաև quizizz.com-ը։ Այս գործիքի պարզ օգտագործման շնորհիվ հնարավոր է ստեղծել խաղի տարբերակով հարցումներ, խաչբառեր, փազլներ, համեմատություններ և անցկացնել մրցույթներ։ Այստեղ պետք է հաշվի առնել, որ հարցերը միավոճ են և հնարավոր չի լինի պարզել աշակերտների բազմաշերտ իմացությունը նյութի վերաբերյալ, սակայն գործիքը բավականին լավն է հետաքրքրություն առաջացնելու և ստեղծագործական մոտեցումները զարգացնելու համար։

https://quizizz.com/profile/60644d6874ee63001b66bfa7

5. Աշխատանքային լավ հարթակ է padlet.com-ը, այստեղ կարելի է գրել առաջադրանքներ, տեղադրել նկարներ։ Սա ավելի շատ գրատախտակի ֆունկցիա է կատարում և այստեղ նաև կարելի է կարծիք գրել այլ մարդու տեղադրած պատասխանի տակ, եթե իհարկե ստեղծողը սահմանափակում չի դրել դրա վրա։ Գործիքն ունի վճարովի ծառայությունների հատված, որոնք ավելի լայն հնարավորություններ են տալիս օգտվողին, սակայն պարզ, արագ և հասկանալի գործիք է և կարող է նպաստել աշակերտների ստեղծագործական մոտեցումների զարգացման համար։

https://padlet.com/lianaqosakyan/lcfoiiruc03zhsqm

Աշխատելով նաև համավարակի պայմաններում պարտադիր հեռավար սկզբունքով ուսուցիչների և աշակերտների մեծամասնությունը յուրացրեց նորանոր

հարթակներ և հնարավորություններ կրթական միջավայր ստեղծելու համար օգտագործելով՝ Zoom (տեսազանգ և մեծ լսարանի տեսնելու հնարավորություն), Microsoft Teams, Google meet, Gmail.com հարթակները:



Եզրակացություն

Ներկա ժամանակներում դպրոցականների ինքնազարգացման և ստեղծագործական կարողությունների համակարգման հարցերը խիստ արդիական նշանակություն ունեն: Կրթության որակի բարձրացումը և այն մրցակցային հարթակի վրա պահելը բոլոր ժամանակների գերխնդիրներից են եղել և կան: Այսօր ուսուցչի և կրթությունը սպասարկող այլ մասնագգետների համար ծառացել է նոր մարտահրավեր՝ հետաքրքիր և գրավիչ դարձնել կրթության այս կամ այն ոլորտը 21-րդ դարի աշակերտի համար: Սա այդքան էլ հեշտ լուծելի խնդիր չէ, որքան երևում է առաջին հայացքից: Այսօր գրեթե բոլոր կրթական բնագավառները ունեն աշակերտին ներգրավված պահելու և նրա հետաքրքրությունը շարժելու խնդիր: Քանի որ մենք գործ ունենք տեղեկատվական ամենալայն ցանցից անխափան օգտվող սերնդի հետ, ապա նրանց տեղեկությամբ զարմացնելն ու փաստերը բերելը դեռ քիչ է: Կարծում եմ, որ կրթության բոլոր բնագավառներում, այդ թվում և պատմության դասաժամերին հաջողված աշխատանքի գրավականը ստեղծագործական մոտեցման զարգացումն է թե՛ ուսուցչի մոտ և թե՛ աշակերտի մոտ:

Հասարակության զարգացման ժամանակակից շրջանը բնութագրվում է նրա վրա ուժեղ ազդեցությամբ համակարգչային տեխնոլոգիաների,որոնք ներթափանցում են մարդու գործունեության բոլոր ոլորտներ, ապահովում են հասարակության մեջ տեղեկատվական հոսքերի տարածումը՝ կազմելով գլոբալ տեղեկատվական տարածք: Այս գործընթացների բաղկացուցիչ և կարևոր մասը կրթության համակարգչայնացումն է:

Վերջին տասնամյակում կրթության ոլորտում համակարգչային տեխնոլոգիաների լայն կիրառումը առաջացրել է մանկավարժական գիտության նկատմամբ հետաքրքրության աճ:

Վերը կատարված մեր ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ այսօրվա պայմաններում հիրավի պետք է լինել ստեղծագործ և զարգացնել հատկապես այդ մոտեցումները որպեսզի որակյալ աշխատանք իրականացվի: Կրթության և մարդու կյանքի գրեթե բոլոր ոլորտներ ներթափանցած տեխնիկան և ՏՀՏ գործիքներն անխոս վկան են այն փոխված աշարհի և մոտեցման, որտեղ մենք աշխատում և արարում ենք:Ուստի շատ կարևոր է ստեղծագործական մոտեցման զարգացումը կրթության ու

հատկապես պատմության ուսումնասիրության դասաժամերին, քանի որ պատմությունը մեր անցած ճանապարհի ուսումնասիրությունն է, որը կապահովի մեր կայուն ապագան։

Չիմանալ պատմություն և չհասկանալ պատմության զարգացման օրինաչափությունները նշանակում է ապրել կույր կյանքով՝ զրկված ապագան լուսավորող իմաստի լույսից։

Բովանդակություն

Ներածություն ----------2

Պատմության ուսուցման ընթացքում սովորողների
ստեղծագործական մոտեցման կարևորությունը---------- 3

ՏՀՏ գործիքները որպես ստեղծագործական
մոտեցման հնարավորություն---------- 8

Եզրակացություն ----------13

Օգտագործված գրականություն ցանկ----------16

Օգտագործված գրականության ցանկ

1.Маслоу А., Дальние переделы человеческой психики, СПБ: Евразия /1999/, 432с.

2.Дронова Т.А., Формирование интегрально-креативного стиля мышления будущих педаго-

гов в образовательной среде вуза: Москва-Воронеж /2007/, 368 с.

3.Creativity: from potential to realization, edited by Robert J. Sternberg, Elena L. Grigorenko, and

Jerome L. Singer /2004/, 223 p.

4.Kane P., The Play Ethic: A manifesto for a different way of living, Macmillan, London /2004/

5.Torrance E.P., The Nature of Creativity as Manifest in the Testing. The Nature of Creativity.

Cambridge. /1988/ 75 p.

6.Guilford J.P., Structure of intellekt model: New York /1969/ 64 p.

7.Աղուզումցյան Ռ.Վ., Պետրոսյան Լ.Հ., Պողոսյան Ս.Հ., Խաչատրյան Ա.Ռ., Կառավարիչնե-

րի հոգեբանական ընտրության գործընթացի առանձնահատկությունները, Երևան /2016/

8.Шурхут С.М., Подростковый возраст: развитие креативности, самосознания, эмоций, кому-

никации и ответственности. СПБ., Речь, /2006/ 112 с.